Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան
(Պատվիրատուի ղեկավար անուն ազգանուն)

(Ստորագրություն)

Արձանագրություն N 4
«ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման)

ք. Երևան 26 փետրվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝	Ա.Գրիգորյան
քարտուղար՝	Գ.Մելիքսեթյան
անդամներ՝	Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Է.Հովսեփյան, Մ.Նազարյան

1.Որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման դրական պատասխանը:

2. **Գնահատող հանձնաժողովը գնահատեց բավարար** 1-3-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2.Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին 1-3-րդ չափաբաժիններով:

բ/ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

գ/ պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ. Սիմոնյան

_____ Է.Հովսեփյան

_____ Մ.Նազարյան